Պարիսպը քանդուած խառն ի խուռն իրար վերայ կուտակուած են հսկայ քարինք, ուր խաչի նշան մի չերևիր որպէս և մատուռի մէջ, միայն մի քար կայ, որոյ վերան սակաւ ինն կոփուած կը նշմարուի մի մարդու պատկեր կէս մէջքէն բարձր։

Մատուռի հիւսիսային հիմը սանդխանման երեք պատուանդաններ ունի, ներսէ ներս հիւսուած՝ երրորդին վերայ որմն բարձրացած։

Քարերն մեծ ու լայն են, խորանի ներքին երեսին վերայ երկու երկու դոգաւոր քարեր բոլորշի մանն բռնած են։

Ծեփն յախճապակիի նման կարծր է։

Քուրդ և հայք մեծ աշխատանք թափած են որ քարերը կրից բաժանեն, տանեն իւրեանց շինութեանց գործածելու, չեն յաջողած. քուրդք դիւրութիւն գտած են, ջուրը կեռացնեն, վերան կը լեցնեն, սեպով և կը քանդեն։

Մատուռից 40—50 մէթր ի հիւսիս արևմուտս, ձորակի ձախ ափին վերայ կան երկու հսկայ դերեզմաններ, որոց միջավայրն հաստատուած է մի մեծ ժայռի կտոր, այս դերեզմաններն ևս քուրդք պեղած և դուրս հանած են միջից մանր քարեր։

Այս մատուռի քարերն տակաւ առ տակաւ քրդեր քանդելով մատուռը խախտած են, որով վերջի տարիներս գմբէթը քանդեցաւ, գլորեցաւ դէպի ձորն։

Այս վանքը անծանօթ է Բազրևանդցոց համար, միայն Ջեռական գիւղացիք երբեմն ուխտի կը գնան։ Ըստ իմ կարծեաց Ս. Սուքիասեանց նշխարներու ամփոփուած վայրն լինելու է, որ յետոյ Ս. Լուսաւորիչ վանք շինած և միաբանութիւն հաստատած է. ըստ պատմութեան։